



## Անձնական Վնասվածքի եւ գործատեղում պատահած վնասվածքի փոխ-հատուցման վրայ գրավի որոշում



Եթե երեխայի ապրուստադրամին պարտք էք եւ ձեր աշխատանքի բերումով ստացված վնասվածքի դիմաց ստանում էք վճարումներ կամ անձնական վնասվածքի դիմաց ստանալու էք փոխ-հատուցում ձեր ապահովագրությունից, հաւանական է որ մենք գրավի տակ դնենք ձեր փոխ-հատուցումները: Եկամուտը գրավի պահելու որոշումը իրավական մի պահանջ է որ դրվում է ձեր ունեցվածքի վրայ մինչեւ պարտքի վճարումը:

### ■ Ի՞նչու է իմ ապահովագրական ընկերությունը գրավի պահել այն

Եթե գործատեղում ձեզ պատահած վնասվածքի կամ անձնական վնասվածքի հետեւնեքով ապահովագրությունից պիտի ստանաք վճարումներ կամ վերջնական փոխ-հատուցում եւ պարտք էք ձեր երեխայի ապրուստադրամին, Department of Child Support Services (DCSS) (Երեխաների Օգնութեան Ծառայությունների Բաժինը) կարող է վերահսկել ձեր ստանալիքները եւ գրավի տակ դնել ձեր ստանալիք գումարները եւ որեւէ վերջնական փոխ-հատուցում: Բոլոր ստացված գումարները կը գործածվեն ձեր երեխայի ապրուստադրամի պարտքի վճարման համար:

### ■ Ի՞նչպէս կարող էք իմանալ թէ ձեր ապահովագրական ընկերությունը գրավի է տակ է դրել ձեր ստանալիքները

Երբ գրավի է դրվում ձեր ապահովագրական փոխ-հատուցումը, Child Support Lien Network (CSLN) (Երեխայի Ապրուստադրամի Գրավի Որոշման Համացանցը) արտադրում է “Եկամուտների պահումի Որոշում” որը ուղարկվում է ձեր ապահովագրական ընկերութեան: Ձեր ապահովագրական ընկերությունը կապվում է ձեզ հետ եւ ուղարկում է ձեզ նամակի մէկ պատճենը:

### ■ Ի՞նչպէս իմանալ թէ արդէն գրավի է դրվել ձեր ստանալիքները

Եթե գրավի է դրվել ձեր ապահովագրական փոխ-հատուցումները, կարելի է որ անմիջապէս կապվէք ձեր երեխաների ապրուստադրամի տեղական գործակալութեան հետ (LCSA): LCSA-ի կողմից մի ներկայացուցիչ ձեր հետ քննարկում է ձեր ընտրանքները եւ ձեր հետ միասնաբար աշխատելով լավագոյն լուծումն է գտնում նկատի ունենալով ձեր մասնավոր պարագան:

Կապվէք Ձեր երեխաների ապրուստադրամի ապահովման տեղական գրասենեակի հետ հետեւյալ հեռախոսահամարով՝ 1-866-901-3212, կամ լսողութեան դժվարություն ունեցողների համար TTY՝ 1-866-399-4096

*Շատ կարելի է ժամանակին վճարել դատարանի որոշած ձեր երեխայի ապրուստադրամը՝ խուսափելու հարկադրական գործողություններից:*

*DCSS-ը պատրաստ է ձեզ օգնելու եթէ վճարելու դժվարութիւն ունեք:  
Մի սպասէք.*



Child Support  
Directors Association  
*A Coalition of Experts Collecting Billions  
for California's Children*



*“Երեխայի Ապրուստադրամ...  
Ներդրում մեր երեխաների ապագայի համար”*

CHILD SUPPORT DIRECTORS ASSOCIATION (ԵՐԵՒԱՆՅԻ  
ԱՊՐՈՒՍԱԴՐԱՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ)

[www.csdaca.org](http://www.csdaca.org)